ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-ԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Տաթևիկ Ռևազյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա), 2019թ. օգոստոսի 22

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   «Ավիակոմպանիա Արմենիա» ավիաընկերությունը

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   Հանդիպել ՌԴ ավիացիոն իշխանությունների հետ համագործակցության հարցեր քննարկելու նպատակով

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Քննարկվել են «Ավիակոմպանիա Արմենիա» ավիաընկերության գրությամբ բարձրացված հարցերը: Քննարկվել են նաև խնդրին վերաբերող ՀՀ և ՌԴ միջև կնքված Միջպետական համաձայնագրի դրույթները: «Պոբեդա» ավիաընկերության ղեկավարության հետ հանդիպման ընթացքում քննարկվել են ավիաընկերության համար ՀՀ տարածքում առաջացած խնդիրների լուծման ճանապարհները, ինպես նաև ավիաընկերության հետագա նախագծերը, այդ թվում՝ հայաստանյան ավիացիոն շուկայում:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Հանդիպում է տեղի ունեցել ՌԴ տրանսպորտի նախարարության քաղաքացիական ավիացիայի ոլորտում պետական քաղաքականության դեպարտամենտի տնօրեն Սվետլանա Պետրովայի, նույն դեպարտամենտի ներկայացուցիչների, ինչպես նաև ՌԴ արտաքին գործերի նախարարության ներկայացուցչի հետ, նաև՝ ռուսական «Պոբեդա» ավիաընկերության ղեկավարության հետ: Հանդիպում է տեղի ունեցել նաև «Ջեորջիան Էյրվեյզ»

ավիաընկերության տնօրեն Թամազ Գայաշվիլիի հետ, ինչպես նաև «Ավիակոմպանիա Արմենիա» տնօրեն Ռոբերտ Օգանեսյանի հետ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ռուսական կողմը, հաշվի առնելով կայացած բանակցություններում ներկայացված փաստարկները, ևս մեկ անգամ կքննարկի առաջացած խնդիրը և կներկայացնի վերջնական դիրքորոշում:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Առաջարկներ հնչեցին շարունակել համագործակցությունը ՌԴ և հայաստանյան ավիացիոն շուկայում:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.**

27.08.2019թ.